**ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ**

CDSS

State of California –
Health and Human Services Agency
**California Department of Social Services**
**Adult Programs Division**

Հարգելի IHSS մատակարար,

2020թ. հուլիսի 1-ին դուք կստանաք 16 ժամ հիվանդության վճարովի արձակուրդ: Ներկայումս վաստակած հիվանդության արձակուրդի ժամերն ուժը կկորցնեն 2020թ. հունիսի 30-ին:

Հիվանդության վճարովի արձակուրդի ժամերը 8-ից ավելացել են մինչև 16՝ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ նահանգային նվազագույն աշխատավարձի մինչև ժամը $13 աճով պայմանավորված:

Եթե դուք նոր մատակարար եք և դեռ չեք վաստակել հիվանդության ձեր արձակուրդի ժամերն՝ ընդհանուր առմամբ աշխատելով 100 ժամ՝ լիազորված ծառայություններ տրամադրելով մեկ կամ ավելի IHSS ստացողին(ներին), դուք ձեր 16 ժամը կստանաք, երբ աշխատեք պահանջվող 100 ժամը: Դուք կարող եք սկսել օգտագործել ձեր 16 ժամ հիվանդության վճարովի արձակուրդն, երբ աշխատեք լրացուցիչ 200 ժամ կամ 60 օրացուցային օր, որը որ ավելի շուտ տեղի կունենա:

2020թ. հուլիսի 1-ին կամ դրանից հետո ստացված հիվանդության պատճառով արձակուրդի ժամերը պետք է օգտագործվեն մինչև 2020թ. հունիսի 30-ը: Այդ պահին հիվանդության արձակուրդի որևէ չօգտագործված ժամ ուժը կորցրած կհամարվի:

Եթե որևէ հարց ունեք հիվանդության ձեր արձակուրդի նպաստների վերաբերյալ, կարող եք զանգահարել IHSS-ի ձեր տեղական վարչաշրջանի գրասենյակ կամ Հանրային մարմնին:

Շնորհակալություն: